

ՍԵՂԱ ԱԼԻԽԱՆՅԱՆ

*Մակրոտնտեսական քաղաքականություն և
կանխատեսում, բակալավրիատ, 4-րդ կուրս*

ՀՀ ՓՈՂԻ ՇՈՒԿԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 2008-2017 ԹԹ.

Հիմնաբառեր. փողի շուկա, շուկայական տնտեսություն,
դրամավարկային ոլորտ, ֆինանսական կա-
յունություն

Կարևորելով փողի շուկայի դերը ֆինանսական կայունության ապահովման գործում հողվածում վերլուծվել են փողի շուկայում փողի պահանջարկը բնութագրող քանակական և որակական ցուցանիշները, ներկայացվել են փողի պահանջարկի վրա ազդող գործոնները ՀՀ-ում:


Փողի շուկան ֆինանսական շուկայի մի մասն է, որտեղ իրականացվում են կարճաժամկետ (մինչև 1 տարի) դեպոզիտավարկային գործարքներ: Այն ինստիտուտների ամբողջություն է, որում ձևավորվում են փողի նկատմամբ առաջարկը և պահանջարկը:

Շատ հաճախ փողի շուկան անվանում են «շուկայի հատուկ հատված», որտեղ իրականացվում է փողի՝ որպես յուրահատուկ ապրանքի առքը և վաճառքը, որը գործարքներ կատարելիս փոխանակվում է այլ իրացվելի ակտիվների հետ:

Փողի շուկան՝ որպես շուկայական տնտեսության կարևոր բաղադրատարր, բնութագրվում է մի շարք որակական և քանակական ցուցանիշներով: Հիմնական քանակական ցուցանիշը, որը լիովին բնութագրում է դրամավարկային ոլորտը, փողի զանգվածն է, որը գտնվում է կենտրոնական բանկի մշտական վերահսկողության ներքո: Փողի զանգվածը ապրանքների և ծառայությունների շրջանառությունը ապահովող տնային տնտեսությունների, ձեռնարկությունների և պետության ձեռքում գտնվող կանխիկ և անկանխիկ միջոցների ամբողջությունն է:


Եթե, տնտեսական աճի բարձր տեմպերով պայմանավորված, 2006-2007 թթ. փողի զանգվածն ունեցել է աճի բարձր տեմպեր, ապա 2008 թ. տնտեսության աճի տեմպի դանդաղման և 2009 թ. արձանագրած 14.1% տնտեսական անկման պարագայում նկատվեց փողի նկատմամբ պահանջարկի նվազում: Արդյունքում փողի զանգվածի աճը 2008 և 2009 թթ. կազմեց համապատասխանաբար 2.2% և 15.1%¹: 2010-2016 թթ. փողի զանգվածի միջին աճը կազմել է 18.3%: Իսկ 2017 թ. փողի զանգվածը, նախորդ տարվա համեմատ, աճել է 17.7%-ով: 2010-2017 թթ. ժամանակահատվածում փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկ դրամը միջինում աճել է 9.8%-ով, դրամային ավանդները՝ 33.4%-ով, իսկ արտարժույթով ավանդները՝ 12.7%-ով: Վերջին տարիների տնտեսական աճի կայունացմանը զուգընթաց 2013-2016 թթ. փողի զանգվածը միջինում աճել է 12.3%-ով (գծապատկեր 1):

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2011-2013 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 24, <http://www.gov.am/files/docs/705.pdf>:



Գծապատկեր 1. Փողի զանգվածի շարժընթացը 2008-2017 թթ., %¹

Տնտեսական քաղաքականություն մշակելիս և մակրոտնտեսական քաղաքական ուղղությունները որոշելիս օգտագործվում են խմբավորված ցուցանիշներ՝ **փողային ագրեգատներ**, որոնք բնութագրում են փողի առաջարկը:² ՀՀ-ում գործում են M_1 , M_2 և M_2X ագրեգատները:³ Դրամային նեղ զանգվածը՝ M_1 ագրեգատը, որը ներառում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների դրամով ցպահանջ ավանդները, 2008 և 2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ունեցել է նվազման միտում 2007 թ. համեմատ նվազելով համապատասխանաբար 9.4 և 15.6%-ով՝ հիմնականում ցպահանջ ավանդների նվազման արդյունքում: Արդեն 2010 թ., նախորդ տարվա համեմատ, M_1 ագրեգատը աճել է 11.9%-ով, իսկ 2017 թ., նախորդ տարվա համեմատ, աճել է 20.3%-ով: Դրամային լայն զանգվածը՝ M_2 ագրեգատը, որը, բացի վերոնշյալից, ներառում է նաև ժամկետային ավանդները, 2008 և 2009 թթ., 2007-ի համեմատ, նվազել է համապատասխանաբար 4.1 և 19.6%-ով, իսկ 2017 թ., 2016-ի համեմատ, աճել է 28.9%-ով: M_1 և M_2 ագրեգատները 2008-2017 թթ. ունեցել են հետևյալ շարժընթացը.



Գծապատկեր 2. Փողի M_1 , M_2 և M_2X ագրեգատների աճի տեմպը ժամանակաշրջանի վերջի դրությամբ, նախորդ տարվա համեմատ, %⁴

¹ Ցուցանիշները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ ՀՀ ԿԲ տվյալների հիման վրա <https://databank.cba.am/>:

² Տե՛ս Моисеев С.Р., Макроэкономика, Москва, 2008, глава 8, էջ 91:

³ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք, Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն, Փողի ագրեգատների էությունը և կիրառման շրջանակները, էջ 36: https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/dram_fin_manual/agreg.pdf:

⁴ Տվյալները հաշվարկվել են ՀՀ ԿԲ-ի կողմից ներկայացված փողի ագրեգատների ցուցանիշների հիման վրա <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, M_1 և M_2 ագրեգատները 2008 և 2009 թթ. կտրուկ նվազել են, այնուհետև աճել, սակայն 2012 թվականից դրանց աճի տեմպը դանդաղել է տնտեսական աճի տեմպերի նվազման արդյունքում՝ կազմելով միջինում 6.5% և 13.4%: 2014 թ. տոկոսադրույքների նվազման հետևանքով գրանցվել են աճի բացասական տեմպեր:

Փողի լայն զանգվածը՝ M_2X ագրեգատը, վերջին տարիներին գրանցել է մեծ տատանումներ, սակայն, ի տարբերություն M_1 և M_2 ագրեգատների, աճի բացասական տեմպ չի ունեցել՝ պայմանավորված արտարժույթով ավանդների աճի տեմպով, որը 2009 թ., 2008-ի համեմատ, աճել է ավելի քան երկու անգամ: Արդյունքում ՀՀ-ում դոլարացման մակարդակը, 2008 թ. համեմատ, աճել է 25.1%-ային կետով՝ կազմելով 68.4%: 2010 թվականից Կենտրոնական բանկը իրականացնում է դոլարացման դեմ պայքարի քաղաքականություն, որի արդյունքում նույն թվականին այս ցուցանիշը նվազել է 4.2%-ային կետով, իսկ արդեն 2017 թ., 2009-ի համեմատ, նվազել 12.3%-ային կետով՝ կազմելով 56.1%:

M_2 ագրեգատի և իրական ՀՆԱ-ի միջև կապը հիմնավորելու նպատակով էկոնոմետրիկ մոդելի օգնությամբ կատարվել է ռեգրեսիոն վերլուծություն:¹

Աղյուսակ 1

M_2 ագրեգատի և իրական ՀՆԱ-ի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները²
 $M_2=3.24 \cdot R_GDP-222.56^3$

Dependent Variable: M2
Method: Least Squares
Sample: 2007 2017


Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
R_GDP	3.238080	1.220289	2.653536	0.0263
C	-222.5608	126.9719	-1.752835	0.1135
R-squared	0.438947	Mean dependent var		114.0818
Adjusted R-squared	0.376607	S.D. dependent var		21.81604
S.E. of regression	17.22490	Akaike info criterion		8.693555
Sum squared resid	2670.275	Schwarz criterion		8.765900
Log likelihood	-45.81455	Hannan-Quinn criter.		8.647952
F-statistic	7.041254	Durbin-Watson stat		1.615333
Prob (F-statistic)	0.026323			

Մոդելի արդյունքները փաստում են, որ իրական ՀՆԱ 1%-ային կետով աճը հանգեցնում է նույն ժամանակահատվածում M_2 ագրեգատի 3.24%-ային կետով աճի:

¹ Վերլուծության համար հիմք են հանդիսացել փողի M_2 ագրեգատի և իրական ՀՆԱ-ի 2007-2017 թթ. տարեկան տվյալները: Հաշվարկները կատարվել են EvIEWS 10 ծրագրային փաթեթի օգնությամբ:
² M_2 ագրեգատի և իրական ՀՆԱ ցուցանիշները ներկայացված են հավելված 1-ում:
³ R_GDP -ն իրական ՀՆԱ ցուցանիշն է 2007-2017 թթ.:

Ստացված գործակիցների նշանները համապատասխանում են մակրոտնտեսագիտության տեսական դրույթներին, և մոդելի արդյունքներից ակնհայտ է ստացված կապերի տնտեսագիտորեն հիմնավորված լինելը:

Մի շարք երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, որպես փողի ագրեգատ է ներկայացվում նաև փողի բազան, որը փողի ստեղծմանը նպաստող ԿԲ պարտավորություններն են: Այն երբեմն անվանում են նաև «իզոբազան»¹, քանի որ փողի բազայի փոփոխությունը հանգեցնում է փողի ագրեգատների ավելի մեծ փոփոխության: Եթե մինչև ֆինանսատնտեսական ճգնաժամը փողի բազայի աճի տեմպը եղել է շատ բարձր, ապա, 2008 թվականից սկսած, աճի տեմպը դանդաղել է՝ 2008 և 2009 թթ. կազմելով համապատասխանաբար 5.3% և 13.8%: 2010 թ. ցուցանիշը նվազել է 0.8%-ային կետով, որը պայմանավորված էր ԿԲ դրամավարկային քաղաքականության խստացմամբ: 2011 թ., նախորդ տարվա նկատմամբ, փողի բազան աճել է 164 մլն դրամով կամ 32%-ով, իսկ 2012-2016 թթ. միջին տարեկան աճի տեմպը կազմել է 13.4%: 2017 թ. նկատվում է ցուցանիշի նվազում 0.98%-ային կետով: Փողի բազայում մեծ տեսակարար կշիռ է կազմում ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը, որը, ինչպես երևում է գծապատկեր 3-ից, նույնպես աստիճանաբար ավելացել է մինչև 2013 թ.՝ 2008-ի համեմատաբար աճելով 29.7%-ով: Իսկ 2014-2015 թթ. ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը, 2013 թ. համեմատ, նվազել է գրեթե 7%-ային կետով, ինչը պայմանավորված էր տնտեսական աճի ցածր տեմպերով և 2014 թ. սկզբին գնաճի տեմպի նվազմամբ: Արդյունքում ԿԲ-ն նվազեցրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 2014 թ. սեպտեմբերին սահմանելով 6.75%:



Գծապատկեր 3. Փողի բազայի վարքագիծը 2008-2017 թթ., մլն դրամ

2014 թ. փետրվարից Կենտրոնական բանկը դրամային միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման նորմը 4%-ից նվազեցրեց 2%-ի, իսկ արտարժույթով ներգրավված միջոցների համար պահուստավորման դրույքը 12%-ից բարձրացրեց 24%-ի:³ Այս քաղաքականության արդյունքում 2014 թ.



¹ Տե՛ս Հ.Բ. Ղուչյան,Գ. Ավագյան, Մակրոտնտեսական կարգավորում, Երևան, 2008, էջ 232:

² ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, Հայաստանի ֆինանսական շուկայի կայունությունը, 2014, էջ 28 https://www.cba.am/AM/ppperiodicals/fin_stab_15.pdf:

³ Տե՛ս ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, Հայաստանի ֆինանսական շուկայի կայունությունը, 2014, էջ 28 https://www.cba.am/AM/ppperiodicals/fin_stab_15.pdf:

դրամային միջոցներով պարտադիր պահուստները, 2013 թ. համեմատ, աճեցին 68.1%-ով, իսկ արտարժույթով ներգրավված պարտադիր պահուստների ծավալը նվազեց 43%-ով: 2015 թ. մինչև առաջին եռամսյակի վերջ ՀՀ կենտրոնական բանկը, արժույթային շուկան կայունացնելու նպատակով, աստիճանաբար արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման դրույքը 24%-ից նվազեցրեց 20%-ի, իսկ գնաճը նպատակային ցուցանիշին (4%) մոտեցնելու համար ՀՀ ԿԲ խորհուրդը վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացրեց 3.75%-ային կետով և սահմանեց 10.5%:¹ 2016 թ. սեպտեմբերին ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ՝ արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման դրույքաչափը 20%-ից նվազեցվեց 18%-ի:

2017 թ., նախորդ տարվա նկատմամբ, փողի զանգվածը աճել է 17.7%-ով, իսկ փողի բազան՝ նվազել 0.98%-ով: Ընդ որում, փողի զանգվածի աճին նպաստման ամենամեծ չափն ունեցել են դրամով ավանդները՝ 12.1%-ով, իսկ փողի բազայի նվազմանը ամենամեծ չափով նպաստել են արտարժույթով թղթակցային հաշիվները՝ 1.6%-ով:




Գծապատկեր 4. 2017 թ. փողի զանգվածի և փողի բազայի աճի նպաստումները²

Ինչպես երևում է գծապատկեր 5-ից, ՀՀ ԿԲ-ն, 2009 թ. ֆինանսական ճգնաժամի պայմաններում, տնտեսական աճը խթանելու նպատակով, իրականացրել է ընդլայնող դրամավարկային քաղաքականություն՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցնելով 2.25%-ային կետով: Իսկ 2010 թվա-

¹ Տե՛ս նույն տեղը:

² Ցուցանիշները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ ՀՀ ԿԲ տվյալների հիման վրա <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

կանից դրամավարկային պայմանների խստացման արդյունքում այն աստիճանաբար բարձրացվել է՝ սահմանվելով 8%, որը պահպանվել է նաև 2011 և 2012 թթ., քանի որ գործող վերաֆինանսավորման տոկոսադրույքի միջոցով հնարավոր էր ապահովել նպատակային միջակայքում գտնվող գնաճ: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը 2015 թ. դեկտեմբերին սահմանվել է 8.75%: Իսկ 2015 թ. գնաճային սպասումների ուժեղացման արդյունքում ԿԲ-ն տոկոսադրույքը բարձրացրեց 2.5%-ային կետով՝ պահպանելով վերաֆինանսավորման տոկոսադրույքի ուղղորդիչ դերը և լոմբարդային ռեպո տոկոսադրույքից բնականոն՝ 1.5%-ային կետով հեռացվածությունը:¹ 2016 թ. ԿԲ ընդլայնողական դրամավարկային քաղաքականության արդյունքում վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվեց 6.25%՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ նվազելով 2.5%-ային կետով: Իսկ 2017 թ. վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցվեց 0.25%-ային կետով՝ կազմելով 6%:



Գծապատկեր 5. Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները 2008-2017 թթ. ժամանակաշրջանի վերջի դրությամբ²

Վերջին տարիներին մեծ տատանումներ են գրանցվել լոմբարդային ռեպո տոկոսադրույքների վարքագծում (գծապատկեր 5): Մինչև 2008 թ. տարեվերջ ռեպո տոկոսադրույքը կազմել է 10,75%: Իսկ 2009 թ. վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազմանը զուգահեռ՝ ԿԲ-ն լոմբարդային ռեպո տոկոսադրույքը սահմանեց 8%, որի արդյունքում նվազեց լոմբարդային վարկերի ծավալը: 2010 թվականից այս ցուցանիշը բարձրացվել է՝ 2014 թ. վերջին դրամի արժեզրկման հետևանքով նույնիսկ հասնելով 20%-ի: Իսկ 2015 թ. ընթացքում այն աստիճանաբար նվազել է՝ տարվա վերջին կազմելով 10,25%, որի արդյունքում ռեպո գործարքների ծավալը 2015 թ. դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կրճատվել է 6,8%-ով: 2016 և 2017 թթ. ռեպո տոկոսադրույքի՝ համապատասխանաբար 2.5 և 1.75%-ային կետով նվազմամբ լոմբարդային վարկերի ծավալը, 2015 թ. համեմատ, աճել է ավելի քան երկու անգամ:

ՀՀ ԿԲ-ի կողմից ներգրավված միջոցների տոկոսադրույքների աճին զուգընթաց դրանց ծավալները ցուցաբերել են աճի միտում և 2008 թ. դեկտեմբերին կազմել են 7.1 մլն դրամ: Արդեն 2009 թվականից, աստիճանաբար ավելանալով, ՀՀ ԿԲ-ի կողմից ներգրավված միջոցները 2016 թ. կազմել

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, Հայաստանի ֆինանսական շուկայի կայունությունը, 2015, էջ 2 https://www.cba.am/AM/ppperiodicals/fin_stab_16.pdf:

² Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Դրամավարկային միջնորդության համակարգի հիմնական ցուցանիշներ http://www.armstat.am/file/article/finansner_2017_3.pdf:

են 508.5 մլն դրամ:¹

2007 թ. դեկտեմբերին ՀՀ ԿԲ-ն սահմանեց բանկային տոկոսի 11% հաշվարկային դրույք: 2008 թ. չորրորդ եռամսյակին սահմանվեց 12% դրույք, իսկ 2010 թ. հունվարին՝ 13%: Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը 2010 թ. չորրորդ եռամսյակին, ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ, սահմանվեց 12% և մինչև այսօր չի փոփոխվել:² Լինելով անցումային տնտեսությամբ երկիր՝ ՀՀ-ում փողի շուկայում պահանջարկի վրա ազդող հիմնական գործոններ են մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, տոկոսադրույքները, փոխարժեքը, տնտեսական ակտիվությունը, գնաճի բարձր մակարդակը: Փողի պահանջարկի վրա ազդող գործոններ են ֆինանսական համակարգի զարգացման բնութագրիչները՝ անկանխիկ գործարքների զարգացման անբավարար մակարդակը, կանխիկ գործարքների իրականացման կարգավորման թույլ մակարդակը, ստվերային տնտեսության բարձր մակարդակը, ինչպես նաև կանխիկ միջոցներ պահելու ցածր այլընտրանքային ծախսերը:³

2007-2008 թթ. ՀՀ ֆինանսական շուկան ընդհանուր առմամբ անմասն է մնացել համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցության առաջին ալիքից՝ պայմանավորված միջազգային ֆինանսական շուկաներին ինտեգրման ցածր մակարդակով: 2009 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի խորացման պայմաններում տնտեսական ակտիվության նվազումը իր բացասական ազդեցությունը թողեց ՀՀ ֆինանսական համակարգի վրա: ՀՀ ԿԲ հակաճգնաժամային քաղաքականության շնորհիվ 2010 թվականից ՀՀ փողի շուկան ցուցաբերել է զարգացման միտումներ՝ ցածր տատանողականությամբ և արտաքին բացասական ազդեցությունների բացակայությամբ: Արդեն 2017 թ. արտաքին և ներքին տնտեսական զարգացումներով ՀՀ ֆինանսական համակարգում ամրապնդվել է ֆինանսական կայունություն:

Հավելված 1

Փողային M_2 ագրեգատը և իրական ՀՆԱ-ն 2007-2017 թթ.⁴

Տարեթիվ	M_2 ագրեգատ	Իրական ՀՆԱ
2007	163.9	113.7
2008	95.9	106.9
2009	83.8	95.6
2010	115.7	102.2
2011	126.4	104.7
2012	111.9	107.2
2013	101.9	103.3
2014	96.5	103.5
2015	105.2	103
2016	124.8	100.2
2017	128.9	107.5

¹ Տե՛ս նույն տեղը:

² Տե՛ս ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն, ֆինանսական շուկայի տոկոսադրույքներ, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

³ Տե՛ս Դ.Նազարյան, Կանխիկ միջոցների հարաբերական պահանջարկի գործոնները, 2014 https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/2014_WP_01_Currency_in_circulation.pdf:

⁴ Տվյալները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ ՀՀ ԿԲ և ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx> <http://armstat.am/am/?nid=586&year=2017>:

СЕДА АЛИХАНИЯН

АНАЛИЗ ИНДИКАТОРОВ ДЕНЕЖНОГО РЫНКА РА 2008-2017

Ключевые слова: денежный рынок, рыночная экономика, валютная сфера, финансовая стабильность.

Учитывая важную роль денежного рынка в обеспечении финансовой стабильности, в статье проанализировались численные и качественные показатели денежного рынка характеризующие предложение денег, представлялись факторы влияющие на спроса денег в РА.

SEDA ALIKHANYAN

ANALIZE OF MONEY MARKET INDICATORS OF RA 2008-2017

Key word: money market, market economy, monetary sphere, financial stability.

Considering importance of money market in providance of financial stability in the article are analyzed quantative and qualitative indicators characterising supply of money and performed factors affecting on demand of money in RA.

ԼՈՒՍԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Տնտեսության վիճակագրական
վերլուծություն և կանխատեսում,
մազիստիկա, 1-ին կուրս

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հիմնաբառեր. պետական պարտք, արտաքին պետական պարտք, ներքին պետական պարտք

Տնտեսական գլոբալացման պայմաններում աշխարհի շատ երկրներ, իրականացնելով տնտեսական վերափոխումներ, դիմում են արտաքին ֆինանսավորման աղբյուրների օգնությանը: Պետական պարտքը պետության տնտեսական ռազմավարության իրագործմանը նպաստող, բյուջեային կարգավորման կարևորագույն գործիքներից մեկն է: Պետական փոխառությունը բյուջեային պակասուրդի ֆինանսավորման հզոր ոչ գնաճային աղբյուր է: Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները առանձնակի կարևորություն ձեռք բերեցին 2007-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի համալսելուց հետո, երբ պետական պարտքի կառավարման իրավիճակային ու կարճաժամկետ հատվածում, առավելագույն արդյունքի ստացման նպատակադրումների վրա կառուցված քաղաքականությունը, առանձին երկրների ֆինանսական համակարգի կազմալուծման ու պետության դեֆոլտի իրական վրանգի առջև կանգնեցրեց: ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման խնդիրը առավել սուր և հարկանշական է ինչպես ազգային տնտեսության զարգացման հեռանկարների, այնպես էլ համաշխարհային տնտեսական համակարգում սեփական դիրքերի պահպանության տեսանկյունից:

2008-2017 թթ. պետական պարտքը բացարձակ մեծությամբ ավելացել է 2291 մլրդ դրամով, իսկ հարաբերական մեծությամբ գրեթե եռապատկվել է՝ ՀՆԱ 16.4%-ից հասնելով 56.2%-ի: